**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՈՐՈՇՈՒՄ**

**N 140- Ա**

**04 մայիսի 2015 թ**

# ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ, ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

***որոշում եմ*** '

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) Ս/թ մայիսի 4-ից մինչև 8-ն ընկած ժամանակահատվածում մարզի համայնքներում կազմակերպել աղբահանության, սանիտարական մաքրման, ծառատնկման, ներհամայնքային փողոցների բարեկարգման աշխատանքներ:

2) Աշխատանքներին ներգրավել մարզի ազգաբնակչությանը և համայնքների տարածքներում գործող կազմակերպություններին ու տնտեսվարող սուբյեկտներին:

2. Մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ ապահովել աշխատակիցների և բարձր դասարանների աշակերտների մասնակցությունը այդ աշխատանքներին՝ դպրոցների բակերում սանիտարական մաքրում և ծառատնկում իրականացնելու համար:

3. Մարզային ենթակայության առողջապահական ընկերությունների տնօրեններին՝ ապահովել ընկերությունների աշխատակիցների ակտիվ մասնակցությունը աղբահանության, սանիտարական մաքրման, ծառատնկման աշխատանքներին:

4. Մարզի տարածքում պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհները սպասարկող կազմակերպությունների ղեկավարներին՝ սպասարկվող ճանապարհների եզրերում իրականացնել աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ:

5. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանը /պետ Վ. Հովհաննիսյան/՝ մարզի համայնքներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերել տնկիներ, ծառաթփեր և սերմեր ձեռք բերելու գործում:

6. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին /բաժնի վարիչ Հ. Շահբազյան/՝ հայտարարված աշխատանքների ընթացքը լուսաբանել զանգվածային լրատվության միջոցներով:

7. Աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար մարզպետարանի աշխատակազմի աշխատողներից մարզի համայնքներում նշանակել պատասխանատուներ՝ համաձայն հավելվածի:

8. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝ սույն որոշման կատարման մասին մինչև ս/թ մայիսի 20-ը գրավոր տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

9. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Կ. Հակոբյանին:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2015 թ. նոյեմբերի 4-ի
N 140 - Ա որոշման

**Ց Ո Ւ Ց Ա Կ**

ՄԱՐԶԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՑ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ

**ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ -- Աղեկյան Ալբերտ**

| | |
|---|---|
| Աղեկյան Ալբերտ | - ք. Գավառ |
| Առաքելյան Ռաֆիկ | - Գեղարքունիք |
| Առաքելյան Ռաֆիկ | - Լանջաղբյուր |
| Բադալյան Գարիկ | - Սարուխան |
| Ստեփանյան Էդվարդ | - Գանձակ |
| Հովհաննիսյան Վանիկ | - Կարմիրգյուղ |
| Օհանյան Հրանդիկ | - Ծաղկաշեն |
| Ստեփանյան Նշան | - Նորատուս |
| Համբարձումյան Համբարձում | - Հայրավանք |
| Համբարձումյան Համբարձում | - Բերդկունք |
| Առաքելյան Ալեքսան | - Լճափ |
| Ավետիսյան Սպարտակ | - Ծովազարդ |
| Մուշեղյան Յուրա | - Հացառատ թաղամաս |
| Բադեյան Ռաֆիկ | - Արծվաքար թաղամաս |

**ՄԱՐՏՈՒՆՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ -- Հովհաննիսյան Դերենիկ**

| | |
|---|---|
| Հովհաննիսյան Դերենիկ | - ք. Մարտունի |
| Պողոսյան Անուշ | - Ծովասար |
| Զոհրաբյան Արմեն | - Վաղաշեն |
| Ղազարյան Նորիկ | - Վարդաձոր |
| Ղազարյան Գոռ | - Ձորագյուղ |
| Գասպարյան Ավետիք | - Արծվանիստ |
| Գասպարյան Ավետիք | - Վարդենիկ |
| Կարապետյան Սուրեն | - Ն. Գետաշեն |
| Շառոյան Վարազդատ | - Երանոս |
| Խաչատրյան Սարգիս | - Գեղհովիտ |
| Հակոբյան Աշոտ | - Մադինա |
| Գրիգորյան Գրիգոր | - Լիճք |
| Գրիգորյան Գրիգոր | - Ծակքար |
| Գևորգյան Գևորգ | - Վ. Գետաշեն |

**ՍԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ -- *Հակոբյան Հենրիկ***

| | |
|---|---|
| Հակոբյան Հենրիկ | - ք. Սևան |
| Խաչատրյան Հենրիկ | - Լճաշեն |
| Խաչատրյան Հենրիկ | - Չկալովկա |
| Խաչատրյան Հենրիկ | - Նորաշեն |
| Մարգարյան Գայանե | - Վարսեր |
| Մարգարյան Գայանե | - Ծաղկունք |
| Մարգարյան Գայանե | -Գեղամավան |
| Պետրոսյան Մարտին | - Ծովագյուղ |
| Պետրոսյան Մարտին | - Սեմյոնովկա |
| Մաթևոսյան Նորիկ | - Դդմաշեն |
| Մաթևոսյան Նորիկ | - Ջովաբեր |

**ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ -- *Ասատրյան Իվան***

| | |
|---|---|
| Ասատրյան Իվան | - ք. Վարդենիս |
| Ասատրյան Իվան | - Մ. Մասրիկ |
| Ջարոյան Արամ | - Ակունք |
| Ջարոյան Արամ | - Նորակերտ |
| Գրիգորյան Աշոտ | - Կարճաղբյուր |
| Գրիգորյան Աշոտ | - Ծովակ |
| Օհանյան Տիգրան | - Խաչաղբյուր |
| Օհանյան Տիգրան | - Լուսակունք |
| Հարությունյան Արամ | - Տորֆավան |
| Հարությունյան Արամ | - Վանևան |

**ՃԱՄԲԱՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ -- *Սարգսյան Արտակ***

| | |
|---|---|
| Սարգսյան Արտակ | - ք. Ճամբարակ |
| Սարգսյան Արտակ | - Դրախտիկ |
| Թիվյան Հակոբ | - Վահան |
| Սարգսյան Արտակ | - Թթուջուր |
| Սարգսյան Արտակ | - Այգուտ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ